Հ ա վ ե լ վ ա ծ
ԱՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2022 թվականի -ի N հրամանի

ՈՒսումնական հաստատության դաստիարակի թափուր տեղը համալրելու
մրցույթի անցկացման գրավոր փուլի

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

Շրջանակի մեջ վերցնել ճիշտ պատասխանը

1. **Դաստիարակի թղթապանակի համար անհրաժեշտ փաստաթղթեր.**

ա/ տարեկան պլան, խորհրդատվությունների տետր, անձնական փաստաթղթեր
բ/ երեխաների բժշկական փաստաթղթեր, գրականություն, լուսանկարներ
գ/ պլանավորման և հաշվառման տետր, ինքնակրթության տետր, ծնողական ժողովների արձանագրությունների տետր

Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N 05-Ա/Ք հրաման:

2. **Նշված հանրակրթական հիմնական ծրագրերից ո՞րը պարտադիր չէ.**
ա/ նախադպրոցական կրթական ծրագիրը
բ/ տարրական հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագիրը
գ/ հիմնական հանրակրթական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագիրը

Հիմք՝ «Կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 16:

3. **Նշե՛ք «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակները.**
ա/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 18 տարեկան անձանց վրա
բ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 16 տարեկան անձանց վրա:
գ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 6 տարեկան անձանց վրա:

Հիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, Հոդված 1:

4. **Որո՞նք են աշխատանքային դաստիարակության ձևերը.**
ա/ձեռքի աշխատանքի, ապլիկացիայի պարապմունք, աշխատանք հողամասում
բ/հանձնարարություններ, հերթապահություն, ընդհանուր աշխատանք, ինքնասպասարկում, առարկայական -գործնական աշխատանք, ձեռքի աշխատանք
գ/ համատեղ գործնական աշխատանք, դերային խաղեր

Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ., Երևան:

5. **Նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունն է.**
ա/ ուսուցումը

բ/ խաղը
գ/ զվարճանքը

Հիմք՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Ա. Ա. Նալչաջյանի թարգմանությամբ, Լույս հրատարակչություն, 1977թ.:

6. Աշխատանքային պայմանագիր կնքելիս կողմերի միջև փորձաշրջան կարող է սահմանվել.

(նշե՛ք սխալ պատասխանը)

ա/ եթե աշխատանքի են ընդունվում ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած անձինք

բ/ գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով

գ/ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 91:

7. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթական հաստատության դաստիարակի պարտականությունը.

ա/ պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը

բ/պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար:

գ/պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

Հիմք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը նախադպրոցական կրթության մասին, սեպտեմբերի 27, 2006թ., գլուխ 1:

8. Ինտերակտիվ՝ թարգմանաբար նշանակում է.

ա/ ակտիվ, շարժուն

բ/ ուսուցողական

գ/ փոխգործուն

Հիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

9. Տարվա կտրվածքով մանկապարտեզի կրթադաստիարակչական աշխատանքները կարգավորող փաստաթուղթ.

ա/ մանկապարտեզի համալիր ծրագիր

բ/ տարեկան աշխատանքային պլան

գ/ ռազմավարական ծրագիր

Հիմք՝ Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N 05-Ա/Ք հրաման:

10. Ի՞նչ տեսակներ ունեն դիդակտիկ խաղերը.

ա/ խոսքի զարգացման, երաժշտական, մաթեմատիկական, բնագիտական

բ/ շարժական, մտավոր, տրամաբանական
գ/ սպորտային, երաժշտական, շարժական

Հիմք՝ «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:

11. «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն.

ա/ գրական հայերենն է
բ/ ժամանակակից հայերենն է
գ/ հայերենն է

Հիմք՝ «Լեզվի մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 2:

12. Ի՞նչ պետք է պահպանել խաղերի ընթացքում.

ա/ կանոնները
բ/ ճարպկություն, հմտություն
գ/ տրված խնդրի կատարումը

Հիմք՝ «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզում», 2007թ.:

13. Որո՞նք են ֆիզ. դաստիարակության հիմնական շարժումները մանկապարտեզում

ա/ քայլ, վազք, ցատկ, նետում, մագլցում, սողանցում, հավասարակշռություն.
բ/ շարժական խաղ
գ/ վազք, վարժություն

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

14.Նշվածներից ո՞րը երեխայի հիմնական իրավունքը չէ.

ա/ երեխայի կյանքի իրավունքը
բ/ երեխայի անվան և քաղաքացիության իրավունքը
գ/ երեխայի ընտրելու իրավունքը

Հիմք՝ «Երեխայի իրավունքների մասին» ԼՂՀ օրենք:

15. Պայմանների առկայության դեպքում կարճաժամկետ խմբերի քանի՞ հերթափոխ կարելի է ունենալ.

ա/ 2- 3 հերթափոխ
բ/ մեկ հերթափոխ
գ/ առանց հերթափոխի

Հիմք՝ «Աշխատանքի կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների կարճաժամկետ խմբերում», Ա. Հովհաննիսյան, Մ. Սարգսյան, 2008թ.:

16. ԽԻԿ նշանակում է.

ա/ խրախուսում, ինտեգրում, կառավարում
բ/ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում
գ/ խաղային, իմաստային, կանոնակարգային

Հիմք՝ Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, ԿԱԻ, 2004թ.:

17. ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ նախքան դրա գործողության ժամկետի լրանալը.

(նշե՛ք սխալ պատասխանը)

ա/ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում

բ/ պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում

գ/ աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 113:

18. Դաստիարակի աշխատանքի պլանավորման հիմնական բաղադրիչներն են.

ա/ մարմնամարզություն, դիտում, աշխատանք, խաղ, պարապմունք, աշխատանք ծնողների հետ, անհատական աշխատանք

բ/ ճաշ, սեմինար-պրակտիկում, կառուցողական խաղեր, հեքիաթների պատմում և վերապատմում

գ/ հանդիպում ծնողների հետ, վերապատրաստում, զրույցներ, դասընթացներ

Հիմք՝ Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N 05-Ա/Ք հրաման:

19. Ո՞րն է նախադպրոցական հաստատության հիմնական խնդիրը.

ա/ բարելավել ընտանիքի նյութական վիճակը

բ/ բարելավել ընտանիքի և հասարակության պահանջը երեխայի ներդաշնակ զարգացման գործում

գ/ պահպանել հաստատության կանոնադրությունը

Հիմք՝ Նախադպրոցական հաստատության կառավարումը, Ա. Հովհաննիսյան, 2008թ. Երևան:

20. Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքի համաձայն՝ մինչև ո՞ր տարիքն է համարվում նախադպրոցական տարիք.

ա/ մինչև 6 տարեկանը

բ/ մինչև 7 տարեկան հասակը

գ/ մինչև 5 տարեկան հասակը

Հիմք՝ Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք, Հոդված 2:

21. Երեխայի բարեկիրթ վարքի կուլտուրայի դաստիարակման համար լավագույն միջոցը ո՞րն է.

ա/ բարոյագիտական զրույցները

բ/ խստապահանջ լինելը

գ/ երեխայի ցանկությունը անմիջապես կատարելը

Հիմք՝ Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր, 2007թ. Երևան:

22. Ծրագրից դուրս ընդգրկված երգերը ու՞մ կողմից են հաստատվում.

ա/ ԿԳ նախարարության հանձնաժողովի կողմից

բ/ կրթության բաժնի կողմից

գ/ մանկապարտեզի տնօրենի կողմից

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

23. Աշխատանքային կարգապահության խախտում համարվում է.

ա/ ընկերոջ մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

բ / տնօրենի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

գ / աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 220:

24. Ի՞նչ մասերից է բաղկացած միջին խմբի երաժշտության պարապմունքը.

ա/ ներգրավիչ, հիմնական, ամփոփիչ

բ/ ձայնակցում և երգեցողության

գ/ երգեր, խաղեր, պարեր

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

25. Մանկապարտեզում պարապմունքներն անցկացվում են.

ա/ մանկավարժների և ծնողների փոխադարձ համաձայնությամբ

բ/ դաստիարակի հայեցողությամբ

գ/ շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի /կանոնակարգի/ համաձայն

Հիմք՝ Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

26. Ո՞ր ժամերին և ու՞մ հաշվին է կատարվում պարտադիր բժշկական զննումը.

ա/ աշխատանքային ժամերին՝ աշխատողի հաշվին

բ/ աշխատանքային ժամերին՝ գործատուի հաշվին

գ/ աշխատանքից հետո՝ գործատուի հաշվին

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 249, կետ 6:

27. Նախադպրոցականի մտավոր զարգացման և դաստիարակության հիմքը հանդիսանում է՝

ա/ կամային որակների ձևավորումը

բ/ երաժշտական լսողության զարգացումը

գ/ զգայական դաստիարակությունը

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», ՀՀ ԿԳՆ, 27. 10. 2011թ. N 1192-Ա/Ք հրաման:

28. Ներքոնշյալներից ո՞րը «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացություն չէ.

ա/ նախադպրոցական ուսումնական հաստատության խումբ

բ/ նախադպրոցական կրթության նպատակը

գ/ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 2:

29. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության ոլորտում ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների իրավունք.

ա/ հարգել երեխայի արժանապատվությունը

բ/ մասնակցել նախադպրոցական կրթության գործընթացին

գ/ մասնակցել նախադպրոցական կրթության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին

Հիմք՝ «Նախադպրցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 28:

30. Այս երևույթը բնութագրվում է աճող սերնդի հոգեկան գործընթացների առավել ինտենսիվ զարգացմամբ /արագընթաց ֆիզիկական և սեռային հասունացում, տեղեկատվական հոսքի կտրուկ ավելացում…/՝

ա/ կրթությոն

բ/ աքսելերացիա

գ/ դաստիարակություն

Հիմք՝ Ս. Մարության, Ա.Դալլաքյան, «Նախադպրոցական մանկավարժություն», 2005, ուսումնական ձեռնարկ:

31. **Ո՞րն է երեխայակենտրոն ուսուցումը.**

ա/ բացահայտել յուրաքանչյուր երեխայի անկրկնելիությունն ու անհատականությունը

բ/ երեխաներին պահել ուշադրության կենտրոնում

գ/ համագործակցել երեխայի հետ

Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:

32. Մտագրոհը համարվում է՝

ա/ փոխգործուն մեթոդ

բ/ ավանդական մեթոդ

գ/ դաստիարակող մեթոդ

Հիմք՝ «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N 05-Ա/Ք հրաման:

33. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում օդային բարվոք միջավայր ստեղծելու համար իրականացվող օդափոխությունը դադարեցվում է երեխաների խմբասենյակ վերադառնալուց.

ա/ 30 րոպե առաջ

բ/ 20 րոպե առաջ

գ/ 10 րոպե առաջ

Հիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ (Հաստատված է ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թիվ 135-Ն հրամանով):

34. Ուսուցման այդ սկզբունքներն ապահովում են երեխայի զարգացումը, տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը և համարվում են.

ա/ զվարճանքների ժամանակ կիրառվող սկզբունքներ
բ/ երեխայի օրգանիզմի աճի համար անհրաժեշտ սկզբունքներ
գ/ ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայի հիմնարար սկզբունքներ

Հիմք՝ «Նախադպրոցական մանկավարժություն» 2005թ., ուսումնական ձեռնարկ:

35. Ի՞նչ է ինտերակտիվ մեթոդը.
ա/ ուսուցանել երկխոսության միջոցով
բ/ պարապմունքների գերակա դերը
գ/ ուսուցումը կազմակերպել բոլոր տարիքային խմբերում

Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան:

36. Նախադպրոցական կազմակերպությունների հիմնական շինությունները պետք է ունենան.
ա/ անմիջական բնական լուսավորում
բ/ արհեստական լուսավորում
գ/ բնական և արհեստական լուսավորում

Հիմք՝ Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) սանիտարական նորմեր և կանոններ (Հաստատված է ԼՂՀ առողջապահության նախարարի 2008թ. հոկտեմբերի 13-ի թիվ 135-Ն հրամանով):

37. Նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են.
ա/ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենքով
բ/ նախադպրոցական կրթության չափորոշիչով
գ/ հաստատության և ծնողների միջև կնքվող պայմանագրով

Հիմք՝ «ԼՂՀ նախադպրոցական ուսումնա¬կան հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրի¬նակելի կանոնադրություն, գլուխ IV, կետ 26:

38. Լոգոպեդական խաղերը միտված են.
ա/ երեխաների խոսքի շտկողական աշխատանքների իրականացմանը
բ/ միջանձնային հարաբերությունների ձևավորմանը
գ/ երեխաների հարմարմանը մանկապարտեզին

Հիմք՝ «Լոգոպեդական խաղեր» ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ 2009թ.:

39. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակը.
ա/ ընտանիքի և ՆՈՒՀ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքների համադասվածությունը
բ/ նախադպրոցական կրթության աշխարհիկ բնույթը
գ/ դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ԼՂՀ օրենք, Հոդված 6:

40. Ֆիզ դաստիարակության խնդիրները.
ա/ առողջության պահպանում և ամրապնդում, օրգանիզմի կոփում, ճիշտ կեցվածքի ձևավորում, բարոյականային հատկանիշների որակական գծերի դաստիարակում, ֆիզիկական որակների ձևավորում

բ/ ճարպկության դաստիարակում
գ/ օրգանիզմի կոփում, ուժի զարգացում

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

41. Ինչպիսի՞ պարապմունքներ են կազմակերպվում խառը խմբերում.
ա/ պարապմունք ամբողջ խմբի հետ, պարապմունք ենթախմբերով, պարապմունք ավագ տարիքային խմբերի հետ
բ/ տարրական մաթեմատիկայի
գ/ խոսքի զարգացումից, երաժշտությունից

Հիմք՝ «Դպրոցի շեմին», Ա. Հովհաննիսյան, 2007թ., Երևան

42. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.
ա/ Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը
բ/ նախադպրոցական կրթություն ստանալու՝ երեխայի իրավունքների սահմանումը
գ/ նախադպրոցական կրթության զարգացմանն աջակցելը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 6:

43. Բառի հնչյունային վերլուծություն կատարելու կարողության խնդիրը համարվում է
ա/ դաստիարակության անհրաժեշտ պայման
բ/ գրաճանաչության նախապատրաստման կարևորագույն խնդիր
գ/ սեղծագործական ունակությունների զարգացման միջոց

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», մեթոդա¬կան ձեռնարկ, Երևան, 2007թ.:

44. Ո՞ր մարմինն է սահմանում նախադպրոցական ուսումնական հաստատության խմբերի խտությունը.
ա/ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը
բ/ տեղական ինքնակառավարման մարմինը
գ/ մանկապարտեզի տնօրենը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 10:

45. Շաբաթական քանի՞ պարապմունք է անցկացվում 4-5 տարեկանների խմբում
ա/ 12 պարապմունք
բ/ 10+1 պարապմունք
գ/ 13 պարապմունք

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

46. Վերադաս մարմիններից ստացված կանոնակարգը (ռեժիմը) պարտադիր ուղեցու՞յց է բոլոր մանկապարտեզների համար
ա/ այո, պարտադիր ուղեցույց է
բ/ յուրաքանչյուր մանկապարտեզ պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան ռեժիմ, ունենալով օրինակելի ռեժիմի տարբերակը
գ/ կարելի է կազմել մոտավոր տարբերակ

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

47. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի լիազորությունը.

ա/ ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների առողջապահական խնդիրների իրականացումը

բ/ վարում է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը

գ/ մշակում, հաստատում և ներդնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 16:

48. Ուսուցման այդ ձևը ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով.

ա/ թեմատիկ ուսուցում

բ/ կազմակերպված ուսուցում

գ/ ավանդական ուսուցում

Հիմք՝ «Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախա¬դպրո¬ցա¬կան կրթության կազմակերպումը», Դաստիարակի ուղեցույց, Երևան, 2010թ.:

49. Ձեռքի աշխատանքների տեսակները

ա/ կտորով, թելով, բնական նյութերով, ապլիկացիա, փայտով, կավով, արհեստական նյութերով

բ/ թղթով, թելով

գ/ բնական նյութերով, մատիտներով

Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ., Երևան:

50. Բառերի բոլոր հնչյունների ճիշտ արտասանությունը, տրամաբանական շեշտերի տեղին օգտագործումը, ձայնի ուժի և խոսքի տեմպի կարգավորումն ապահովում են մայրենի լեզվի ուսուցման կարևորագույն խնդիրներից՝

ա/ մտածողության զարգացումը

բ/ հնչարտաբերական ունակությունների զարգացումը

գ/ նախադպրոցական կրթությունը

Հիմք՝ Մ. Բաղդասարյան, «Ճիշտ արտասանության ձևավորումը նախադպրոցական տարիքում», 1988թ.:

51. Ո՞ր նորմատիվ փաստաթղթով է սահմանվում նախադպրոցական կրթության բովանդակությունը.

ա/ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով

բ/ ռազմավարական ծրագրով

գ/ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 21:

52. Նշվածներից ո՞րն է նախադպրոցական կրթության նպատակ.

ա/ երեխայի անձնային զարգացման նպատակով անհատական մոտեցման ապահովումը

բ/նախադպրոցական և ընդհանուր կրթության հաջորդայնությունն ու շարունակականությունը
գ/ երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 6:

53. Որո՞նք են պարապմունքից դուրս անցկացվող աշխատանքի ձևերն ու միջոցները
ա/տոներ, զրույցներ, ժամանցներ, ավանդույթներ, ցուցահանդեսներ, գեղարվեստական գրականություն, խաղեր.
բ/ զբոսանքներ, էքսկուրսիաներ, զրույցներ
գ/ անհատական և խմբակային

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

54. Այդ խաղերի բովանդակությունը միշտ որևէ մտավոր խնդրի իրականացումն է, և դրանք հիմնականում անց են կացվում դաստիարակի ղեկավարությամբ՝ հստակ կազմակերպված պարապմունքների միջոցով.
ա/ աշխուժացնող խաղեր
բ/ շարժախաղեր
գ/ դիդակտիկ խաղեր

Հիմք՝ Մայրենի լեզվի դիդակտիկ խաղեր, Երևան, 2007թ.:

55. Միջին խմբում որո՞նք են տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման բաժինները.
ա/ քանակ և հաշիվ, մեծություն, ձև, տարածության մեջ կողմնորոշում, ժամանակի մեջ կողմնորոշում
բ/քանակ, հաշիվ, տարածության մեջ կողմնորոշում,
գ/ հաշիվ, հետհաշիվ, գումարում-հանում

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

56. Նախադպրոցական կրթական հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն ածինք, ովքեր ունեն՝
ա/ մանկավարժական կրթություն և աշխատանքային փորձ
բ/ տվյալ ոլորտում երկար տարիների աշխատանքային փորձ
գ/նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում

Հիմք՝ «ՀՀ նախադպրոցական ուսումնա¬կան հաստատություն» կետական ոչ առևտրային կազմակերպության կանո¬նա¬դրություն, գլուխ IV, կետ 28:

57. ԲՄՏ նշանակում է՝
ա/ բացառիկ մարդկային տաղանդ
բ/ բազմաբնույթ մտածողության տեսություն
գ/ բարդ մանկական տարիք

Հիմք՝ «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումն ուսուցման վաղ շրջանում», Այռեքս, Երևան, 2004թ.:

58. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք իրավունք ունեն կրթական ծրագրերին, իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան ստանալու՝

(նշե՛ք սխալ պատասխանը)

ա/ նախադպրոցական, տարրական, ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթություն՝ պետական և համայնքային հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով

բ/ հատուկ կրթություն՝ հատուկ և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական պետական ուսումնական հաստատություններում՝ անվճար հիմունքներով:

գ/ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն և հետբուհական մասնագիտական, հիմնական և լրացուցիչ կրթություն համապատասխան ուսումնական հաստատություններում՝ վճարովի հիմունքներով:

Հիմք՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդված 6, կետ 2:

59. Միջին խմբում մինչև ո՞ր թվանշաններին են ծանոթանում երեխաները

ա/1-5

բ/ մինչև 10

գ/1- 8

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

60. Տարրական մաթեմատիկայից միջին խմբում տարեկան քանի՞ պարապմունք է նախատեսվում.

ա/ տարեկան 36

բ/ տարեկան 40

գ/ տարեկան 30

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

61. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարների և մանկավարժների ատեստավորումը կազմակերպվում է՝

ա/ երկու տարին մեկ

բ/ հինգ տարին մեկ

գ/ յոթ տարին մեկ

Հիմք՝ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, երրորդ պարբերություն:

62. Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի երկարացված՝ մինչև 35 օր տևողությամբ (բացառիկ դեպքերում մինչև 48 օր տևողությամբ) ամենամյա արձակուրդի իրավունք ունեն.

(նշե՛ք սխալ պատասխանը)

ա/ նախադպրոցական ուսումնական հաստատությունների նախադպրոցական դաստիարակության և ուսուցման անձնակազմը (դասավանդողներ, երեխաների խնամքի աշխատողներ):

բ/ հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման կազ-մակերպությունների, բաժանմունքների բժիշկները, բուժքույրերը, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողները:

գ/ մատենադարանների, գրադարանների տնօրենները, փոխտնօրենները, գրադարանավարները, մատենագետները

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, Հոդված 160:

63. Վաղ տարիքում երեխան շրջապատող աշխարհի հետ ծանոթանում է՝
ա/ զգայարանների միջոցով
բ/ մեծերի պատմությունների միջոցով
գ/ ընկերների հետ շփման միջոցով

Հիմք՝«Այնքա՛ն ծանոթ և այնքա՛ն անծանոթ… ¬մեր երեխան», Ձեռնարկ ծնող¬նե¬րի համար, ՄԱԿ-ի գրասենյակ, Քայլ առ քայլ բարեգործական հիմնա¬դրամ, Երևան, 2006թ.:

64. ՆՈՒՀ-ում ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքը կազմակերպում և վերլուծում է՝
ա/ դաստիարակը
բ/ դաստիարակի օգնականը
գ/ մեթոդիստը՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալը

Հիմք՝ ՀՀ ԿԳՆ, 2011 թվականի 26 ապրիլի N 416-Ն հրաման, III բաժին:

65. Ի՞նչ է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը.
ա/ չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները
բ/ երեխաների գիտելիքների ծավալը
գ/ երեխաների կրթական մակարդակը

Հիմք՝ ԷՂՀ օրենքը Նախադպրոցական կրթության մասին:

66. Տարրական մաթեմատիկայի պարապմունքները միջին խմբում քանի՞ տեսակ են լինում
ա/ համընդհանուր և համակցված
բ/ ավանդական, ֆրոնտալ
գ/ ընդհանուր

Հիմք՝ «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր», 2011թ.:

67. Դաստիարակի պարտականություններից են
ա/ պլանավորումը և սաների ուսուցումն ու դաստիարակությունը
բ/ զբաղվում է խմբի ծնողական մուծումների հաշվառմամբ
գ/ ապահովում է խմբի մաքրությունը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց:

68. Շաբաթական քանի՞ պարապմունք են անցկացնում ավագ խմբում
ա/ 14+1
բ/ 14
գ/ 13

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ., Երևան:

69. Ո՞ր ռեժիմային պահից հետո են անցկացնում պարապմունքները.
ա/ ճաշից հետո
բ/ մարմնամարզությունից հետո
գ/ նախաճաշից հետո

Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ.:

70. Տարվա ընթացքում քանի՞ պարապմունք է նախատեսվում գրաճանաչությունից ավագ խմբում.
ա/ 40
բ/ 37
գ/ 33

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:

71. Ի՞նչ գրավիչ ժամանցներ գիտեք
ա/ մարզական զվարճություններ, տոնահանդեսներ
բ/ զրույցներ, համերգներ
գ/ խաղեր, հանդեսներ

Հիմք՝ «Նախադպրոցական կրթական համալիր ծրագիր», 1999թ., Երևան:

72. Մանկապարտեզի երեխաները սովորու՞մ են գրել տառերը.
ա/ ճանաչում են միայն
բ/ չեն գրում
գ/ միացնում են ուրվագծերն ու ներկում

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:

73. Գրաճանաչության պարապմունքները քանի՞ րոպե տևողությամբ են անցկացվում ավագ խմբում.
ա/ 25 - 30 րոպե
բ/ 20 րոպե
գ/ 40 րոպե

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:

74. Գրաճանաչության պարապմունքի առաջնահերթ խնդիրներից մեկը.
ա/ բառի հնչյունային վերլուծությունը
բ/ տառերի գրելը
գ/ ազատ կարդալը

Հիմք՝ «Վաղ գրաճանաչությունը մանկապարտեզի ավագ խմբում», 2007թ. Երևան:

75. Ի՞նչ է խաղը երեխայի կյանքում.

ա/ խաղը ինքնագնահատման, ինքնաճանաչման ասպարեզ է, որը հնարավորություն է տալիս դրսևորել նախաձեռնություն, ճարպկություն, կոլեկտիվ հարմարվողականություն
բ/ խաղի կանոնի ենթարկում
գ/դերային փոխգործակցության, սյուժեի ստեղծագործական կառուցում

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

76. Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականություններից են.

ա/ կազմակերպել ընդունելություն
բ/ կերակրել երեխաներին անձամբ
գ/ պահպանել սենյակների մաքրությունը, օգնել դաստիարակին, կատարել նրա հանձնարարությունները

Հիմք՝ «Նախադպրոցական տարիքի երեխաների հիգիենա», Բ. Անջելյան, 1978թ., Երևան:

77. Գեղագիտական դաստիարակության կազմակերպման ինչպիսի՞ ձևեր կան
ա/ խաղ- պարապմունքներ, պարապմունքներ, վիկտորինաներ, տոնահանդեսներ, էքսկուրսիաներ
բ/ պարապմունքներ
գ/ զբոսանքներ, հանդեսներ

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

78. Ինչպես՞ վարվել կամակոր երեխայի հետ.
ա/ պատժել
բ/ կատարել նրա ցանկությունը
գ/ուսումնասիրել երեխայի անհատական առանձնահատկությունները, օգտագործելով բացատրական- համոզիչ մեթոդը
Հիմք՝ Նախադպրոցականի դաստիարակության հարցեր, Ա. Հովհաննիսյան, 2005թ. Երևան:

79. Ծնողների հետ աշխատանքի ի՞նչ ձևեր կան.
ա/ծնողական անկյուն, ծնողական ժողով, անհատական զրույց, ծնողների հետ սեմինարներ, այցելություն տներ, աշխատանք ծնողական կոմիտեի հետ
բ/ ծնողական ժողով
գ/ զրույց ծնողի հետ, ծնողական ժողով

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, Պրակ IV, 2011, Երևան:

80. Դաստիարակի աշխատանքային օրը քանի՞ ռեժիմային պահերից է բաղկացած. ***ա/ ընդունելություն, առավոտյան մարմնամարզություն, նախաճաշ, պարապմունքներ, զբոսանք, քուն, հետճաշիկ, խաղ-զվարճալիք, տուն- ճանապարհում***
բ/ ընդունելություն, պարապմունք
գ/ ճաշ, զբոսանք, քուն, առավոտյան մարմնամարզում, ճաշ, քուն, զբոսանք

Հիմք՝ «Նախադպրոցական հաստատության կառավարումը», 2008թ. Երևան:

81. Խմբերի խտությունը ըստ տարիքային առանձնահատկությունների մինչև 1, 1-3 տ, 3-6տ

ա/ մինչև 1տ. 10-15, 1- 3 տ.՝ 15-20, 3-6տ. ՝ 25-30

բ/ մինչև 1տ. 20, 1-3տ. ՝10, 3-6տ. ՝ 25

գ/ մինչև 1տ. 7, 1-7տ.՝10, 3-6տ.՝ 30-40

Հիմք՝ ԼՂՀ ԿԳՆ նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի հաստիքացուցակ, 2007թ.:

82. Ո՞վ է անցկացնում օրինակելի պարապմունքը

ա/ մեթոդիստը

բ/ տնօրենը, դաստիարակը

գ/ դաստիարակը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց Պրակ IV, 2011, Երևան:

83. Զմռանը երեխաներին տանու՞մ են զբոսանքի

ա/ ոչ

բ/ այո

գ/ եթե ցուրտ չէ

Հիմք՝ «Նախադպրոցական տարիքի հիգիենան», Բ. Անջելյան, 1978թ. Երևան:

84. Ավագ խմբում խոսքի զարգացումից և գրաճանաչությունից քանի՞ պարապմունք է նախատեսվում շաբաթվա ընթացքում

ա/ 4

բ/ 5

գ/ 2

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

85. Ի՞նչ է պահանջում յուրաքանչյուր երեխա դաստիարակից

ա/ անհատական մոտեցում, հավասար իրավունքներ

բ/ իր սեփական արժանապատվությունը հարգել

գ/ ազատ դաստիարակություն

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

86. Ո՞րն է նախադպրոցական կրթության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունը.

ա/ մշակում է նախադպրոցական կրթության համակարգի մանկավարժ աշխատակիցների ատեստավորման կարգը

բ/ մշակում է նախադպրոցական կրթության բնագավառի պետական քաղաքականությունը

գ/ ապահովում է նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը

Հիմք՝ Նախադպրոցական կրթության մասին ԼՂՀ օրենք, Հոդված 17:

87. Ինչպիսի՞ խաղեր են կազմակերպվում մանկապարտեզում

ա/ սյուժետադերային, խաղ-բեմականացում, շարժախաղ, դիդակտիկ խաղ, ինտելեկտուալ խաղ, ազատ խաղ, խաղ զվարճալիքներ

բ/ ինքնուրույն խաղ, ազատ խաղ, խաղ խաղալիքներով, դիդակտիկ խաղ, խաղ երեխայի ընտրած խաղալիքով

գ/ կենտրոնացնող խաղ, անհատական խաղ, խմբակային խաղ

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

88. Երեխայի մտածողությունը խթանող հարցերը կոչվում են՝

ա/ պարզ հարցեր

բ/ բաց հարցեր

գ/ հետաքրքիր հարցեր

Հիմք՝ Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, ՀՀ ԿԳՆ, 2010թ. 21.01 N 05-Ա/Ք հրաման:

89. Գրաճանաչության, մաթեմատիկայի, արվեստի, շինարարության, խոհարարության, դերային խաղի, բնագիտության, տեխնիկական, սպորտի կենտրոնները միասին կոչվում են.

ա/ մանկական միջավայր

բ/ ժամանակակից միջավայր

գ/ զարգացնող միջավայր

Հիմք՝ Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ, Երևան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2011թ.:

90. Նկարչության պարապմունքների նպատակը.

ա/շրջապատող առարկայական աշխարհի ու երևույթների պատկերումն է երանգավորման և գրաֆիկական եղանակով

բ/ օգտվել մատիտից, ջրաներկից

գ/զարգացնել երեխաների գունային ճաշակը

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

91. ԳՈՒՍ նշանակում է՝

ա/ գործել, ուշադիր լինել, սովորել

բ/ գիտելիք, ունկնդրում, սիստեմավորում

գ/ գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի

Հիմք՝ Երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 3, 4 և 5 տարեկան երեխաների համար, Քայլ առ քայլ, հարեգործական հիմնադրամ, Երևան, 2004թ.:

92. Օրվա ընթացքում դաստիարակը ինչքա՞ն ժամանակ պետք է հատկացնի շարժական խաղերին

ա/ 30 րոպեից ոչ պակաս

բ/ մեկ ժամ

գ/ 15 րոպե

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

93. Ո՞վ է վարում երեխաների հաճախումների մատյանը

ա/ դաստիարակը

բ/ մեթոդիստը

գ/բուժքույրը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց Պրակ IV, 2011, Երևան:

94. Ինչպիսի՞ կերպարվեստային պարապմունքներ են անցկացվում մանկապարտեզում

ա/ նկարչության, ծեփի, ապլիկացիայի, կառուցողական աշխատանքի

բ/ նկարչության, երաժշտության, պարի

գ/ ապլիկացիայի, մայրենի լեզվի, երգի

Հիմք՝ «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», 2007թ. Երևան:

95. Դաստիարակը պատասխանատու՞ է երեխաների առողջության համար

ա/ այո. բժշկական աշխատանքների հետ համատեղ ապահովում է երեխաների առողջության ապահովումը

բ/ ոչ

գ/ պատասխանատու է միայն բուժքույրը

Հիմք՝ Դաստիարակի պաշտոնային պարտականությունները, Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց Պրակ IV, 2011թ. Երևան:

96. Ձախլիկությունը զարգացման առանձնահատկություն է, որը պայմանավորված է՝

ա/ ճիշտ կրթությամբ

բ/ ուղեղի կիսագնդերի գործունեությամբ

գ/ հայեցի դաստիարկությամբ

Հիմք՝ Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009թ.:

97. Դաստիարակի օգնականը իրավունք ունի՞ պարապմունք անցկացնել

ա/ ոչ

բ/ երբեմն

գ/ եթե դաստիարակը բացակայում է

Հիմք՝ Դաստիարակի օգնականի աշխատանքային պարտականությունները:

98. Ի՞նչ է ընդգրկվում դաստիարակի աշխատանքային պլանի մեջ

ա/ օրվա ռեժիմային պահերը

բ/ պարապմունքները

գ/ խաղերը, ճաշելը, քնելը

Հիմք՝ Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի աշխատանքային փաթեթ, մեթոդական ուղեցույց:

99. Մատների վարժությունները նպաստում են հոգեկան գործընթացներից՝

ա/ երևակայության զարգացմանը

բ/ զգացմունքների դրսևորմանը

գ/ ուշադրության, հիշողության զարգացմանը

Հիմք՝ «Հրաշք մատիկներ», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, 2010թ.:

100.Ինչպիսի՞ մեթոդներով ու միջոցներով հասնել երեխաների էկոլոգիական դաստիարակությանը

ա/դիտումների, էքսկուրսիաների, զբոսանքների, նկարչության, ծեփի պարապմունքների, բանաստեղծությունների, երգերի, հեքիաթի ընթերցումների, էկոլոգիական խաղերի միջոցով

բ/ զրույցների

գ/ պարապմունքների

Հիմք՝ «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», 2007թ. Երևան: